ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» մարտի 2015 թվական N 33–Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 118-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը միավորվել է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության հետ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության 2015 թվականի փետրվարի 17-ի N 127/19 գրությունը (քաղաքապետարանում մուտքագրված 2015թվականի փետրվարի 17-ին N 1648 թվագրմամբ), ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 3-րդ մասով, 5-րդ մասի 1-ին պարբերությամբ՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի սեպտեմբերի 30-ի « Գյումրու N 6 նախակրթարանի շենքը «Առդա» բարեգործական հիմնադրամի օգտագործումից հետ վերցնելու և այն Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» N 118-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝

1) վերնագրում, որոշման 2-րդ կետում «արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությանը» բառերը փոխարինել «տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությանը»՝ բառերով,
2) որոշման 2-րդ կետում «հողամասը» բառից հետո լրացնել «99 (իննսունինը) տարի ժամկետով» թիվը և բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (15)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան _____

Գ. Ադամյան _____

Ա. Բաղրամյան _____

Մ. Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Հ. Խաչատրյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«25» մարտի 2015 թ.